**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՋԵՌՈՒՑՄԱՆ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՌՄ-ՊԸԱՊՁԲ-16/1**

Ք. Երևան « » _______________ 2016թ.

ՀՀ ԿԳՆ «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Եվ. Առաքելյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐ ԵՎ ԱՐ ԴԻԶԱՅՆ ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Հ. Պետրոսյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (Գնորդին և Վաճառողին միասին հիշատակման դեպքում, այսուհետ՝ «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**1.1.** Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և ժամկետներում Գնորդին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրով նախատեսված կենտրոնացված ջեռուցման կաթսաները (այսուհետ՝ «Ապրանք»), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**2.1.** Վաճառողը Ապրանքը մատակարարում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով ու ժամկետներում:
**2.2.** Վաճառողը ապրանքը մատակարարում է Գնորդի կողմից նախանշված հասցեով (ք. Երևան, Մ. Մաշտոցի 11):
**2.3.** Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը սույն պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1.Գնորդն իրավունք ունի՝**
3.1.1. Եթե հանձնվել է ոչ պատշաճ որակի՝ սույն պայմանագրի 5.1-րդ կետի պահանջներին և սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն, իր հայեցողությամբ սահմանելով ողջամիտ ժամկետ, անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման համար, և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3. կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև սույն պայմանագրի 7.2. կետով նախատեսված տույժը.

գ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.3. կետով նախատեսված տուգանքը, վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը, եթե ապրանքի համար վճարվել է.

3.1.2. Եթե հանձնվել է սույն պայմանագրով սահմանվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու համապատասխան Ապրանքի չհանձնված մասը.